

ԱՐԱՐԱՏ ԱԳԱՅԱՆ, Стихотворения. Русская лира (переводы), Ереван, «Гитутюн», 2023, 552 с.

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ), Երևան, «Գիտություն», 2023, 552 էջ:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունն ընթերցողի սեղանին դրեց «Արվեստագիտական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Վլադիմիրի Աղասյանի գրական ժառանգությունը ներկայացնող երկրորդ գիրքը՝ «Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ)» ստվարածավալ հատորը¹:

Կերպարվեստագիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ ավանդին զուգահեռ՝ վերջին տարիներին նշանակալի է արվեստաբանագիտականի ներդրումը նաև հայ պոեզիայում, մասնավորապես՝ թարգմանչական արվեստում:

2013 թ. հրատարակվեց Ա. Աղասյանի «Ռուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուն², որն ընդգրկում էր XIX-XX դարերի 15 ռուս բանաստեղծների 60 ոտանավորների դասական օրինակներն ու դրանց հայերեն թարգմանությունները, որոնց մի մասը հայերեն էր թարգմանվել առաջին անգամ: Արդյունքն աննախադեպ էր, քանի որ գործ ունենք հայոց և ռուսաց լեզուներին կատարելապես տիրապետող, մեր օրերում սակավադեպ հանդիպող մտավորականի հետ: Ուստի ժողովածուն մեծ հետաքրքրություն առաջացրեց գրականագետների և ռուսական պոեզիայի սիրահարների շրջանում³:

Եվ պատահական չէ, որ «Արվեստագիտական հանդեսի» անդրանիկ համարում «Ստեղծագործում են արվեստաբանները» խորագրի ներքո առաջին անգամ հրատարակվեց հենց մի փունջ Ա. Աղասյանի անտիպ թարգմանություն-

¹ Արարատ Աղասյան. Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ). Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2023, 552 էջ:

² Ռուսական պոեզիայի գանձարանից. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 164 էջ:

³ Տե՛ս «Ռուսական պոեզիայի գանձարանից», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, 2014, № 2, փետրվար, էջ 2: Арутюнян Гаянэ. Из сокровищницы русской поэзии в переводах Арарата Агасяна, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2013, № 3, с. 324-325: Հարությունյան Մարտին. Արարատ Աղասյանը՝ ռուսական պոեզիայի թարգմանիչ, Արարատ Աղասյան – 60. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 170-173:

ներից⁴: Այս անգամ արվեստաբան-թարգմանիչն ընտրել էր այսպես կոչված «Արծաթե դարի» ռուս անվանի բանաստեղծներ Կոնստանտին Բալմոնտի, Զինաիդա Գիպիուսի, Նիկոլայ Գումիլյովի, Իգոր Սևերյանինի և Աննա Ախմատովայի ստեղծագործությունները:

Եվ ահա՝ «Ռուսական պոեզիայի գանձարանից» ժողովածուի լույս ընծայումից ճիշտ 10 տարի անց վաստակաշատ արվեստաբանն ընթերցողի դատին է հանձնել նոր՝ «Բանաստեղծություններ: Ռուսական քնար (թարգմանություններ)», ժողովածուն⁵՝ այս անգամ հնարավորություն ընձեռելով ծանոթանալու նաև իր պոեզիային: Քչերին է հայտնի, որ դեռևս պատանեկան տարիներին Ա. Աղասյանը ստեղծագործել է, բանաստեղծություններ գրել հայերեն և ռուսերեն, որոնք, ցավոք, մինչ օրս անտիպ էին (միակ բացառությունը վաղամեռիկ մոր՝ Մարգարիտա Ասոյանի հիշատակին նվիրված «Ռեքվիեմն» է (1991), որը լույս էր տեսել 2016-ին՝ մեր իսկ նախաձեռնությամբ)⁶:

Գրախոսվող ժողովածուի առաջին բաժնում առաջին անգամ ներկայացված է արվեստաբանի բանաստեղծական քնարը՝ 44 բանաստեղծությունները ռուսաց և հայոց լեզուներով, որոնց առաջին նմուշներն արդեն 50 տարեկան են և գրվել են 1973 թվականին: Բանաստեղծական շարքը եզրափակում է 2012-ով թվագրված «Դու կանգնած ես իմ դիմաց» ոտանավորը:

Ա. Աղասյանի բանաստեղծությունները մի կողմից ներկայացնում են նրա հարուստ ներաշխարհը, ապրումներն ու հույզերը, երբեմն՝ հոռետեսական երանգներով, մյուս կողմից՝ բացահայտում նուրբ քնարերգուին:

Ժողովածուի երկրորդ՝ «Ռուսական քնար (թարգմանություններ)», բաժնում ընդգրկված են XIX-XXI դարերի ռուս 36 բանաստեղծների ավելի քան 200 ստեղծագործություններ, որոնցից շատերը հայերեն թարգմանվել են առաջին անգամ: Ռուս դասական բանաստեղծների, այդ թվում՝ Ժուկովսկու, Պուշկինի, Տյուտչևի, Լերմոնտովի, Ֆետի, Նեկրասովի, Բալմոնտի, Գորկու, Բրյուսովի, Բլոկի, Գումիլյովի, Պաստերնակի, Մանդելշտամի, Մայակովսկու, Եսենինի, Նաբոկովի, Սիմոնովի, Եվտուշենկոյի, Ռոժդեստվենսկու, Վոզնեսենսկու, Բրոդսկու, բանաստեղծուհիներ Զինաիդա Գիպիուսի, Աննա Ախմատովայի, Մարինա Ցվետաևայի, Բելլա Ախմադովիչայի և այլոց կողքին թարգմանչի ուշադրությանն են արժանացել նաև իր կրտսեր սերնդակիցների՝ Ժամանակակից պոետներ Նիկոլայ Զինովևի, Իվան Գոլուբնիչիի և Բորիս Ռիժիի չափածո երկերը:

⁴ Ռուս բանաստեղծների ստեղծագործությունները Արարատ Աղասյանի թարգմանությամբ, «Արվեստագիտական հանդես», 2019, № 1 (1), էջ 231-241:

⁵ Ժողովածուի մասին տե՛ս Ասատրյան Աննա. Գիտնական-արվեստաբանի քնարական ներաշխարհը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, 2023, № 7-8, հուլիս-օգոստոս, էջ 6: Арутюнян Гаянэ. Часы для души, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2023, № 3, с. 381-382.

⁶ Տե՛ս Ասատրյան Աննա. Արտասովոր անակնկալ՝ հորեյանի առիթով, Արարատ Աղասյան – 60, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 82:

Ժողովածուի հայկական ակորդը հնչում է Վալերի Բրյուսովի «Հայաստանին», Օսիպ Մանդելշտամի «Կառապանը» և Արսենի Տարկովսկու «Կոմիտաս» բանաստեղծությունների թարգմանություններով: Հարազատ մնալով իր սկզբունքին՝ այս ժողովածուում ևս Ա. Աղասյանը զուգահեռ ներկայացրել է բնագիրն ու թարգմանությունը:

Գաղտնիք չէ, որ բանաստեղծական թարգմանությունը թարգմանության ամենաբարդ տեսակներից է, քանի որ թարգմանից պահանջում է մի կողմից՝ տվյալ երկու լեզուների կատարյալ տիրապետում, տվյալ երկրների պատմության, մշակույթի և ազգային առանձնահատկությունների իմացություն (նշենք, որ Ա. Աղասյանն ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը և 5 տարի ապրելով Մոսկվայում՝ խորապես ուսումնասիրել այդ ամենը), մյուս կողմից՝ բանաստեղծություն հորինելու որոշակի կարողություն, տվյալ լեզվի բանաստեղծական ձևի, լեզվի կառուցվածքի, հանգի, այսպես կոչված բանաստեղծության երաժշտության և ավանդաբար ձևավորված չափերի առանձնահատկությունների իմացություն և զգացողություն:

Իր թարգմանություններում կիրառելով բանաստեղծական թարգմանության տեսակը, որը, ի տարբերություն թարգմանության մյուս տեսակների, առանձնանում է իր ազատ բնույթով (չէ՞ որ ուտանավորի խիստ կառուցվածքը երբեմն հնարավորություն չի տալիս գտնելու ուղղակի համապատասխանություններ) և բնագրին ամենահարազատ թարգմանությունն է, Ա. Աղասյանը փոխանցում է բանաստեղծության ոչ թե «մարմինը», այլ հոգին, հիմնական իմաստը՝ միաժամանակ պահպանելով բանաստեղծության կառուցվածքը, դիրքը, հնչյունային կողմը, բանաստեղծական ոտքը, ձևը և հանգը: Ինչպես խոստովանում է թարգմանիչը՝ ինքը ձգտել է, որպեսզի թարգմանությունները բնագրին առավելագույնս հարազատ լինեն թե՛ իմաստով և թե՛ հնչյունային կառուցվածքով:

Մխաված չեմ լինի, եթե ասեմ, որ իր թարգմանություններում Ա. Աղասյանը հանդես է գալիս ոչ միայն որպես թարգմանիչ, այլև ինչ-որ տեղ դառնում է հայերեն տարբերակի «համահեղինակ»: Նրա թարգմանություններն արվեստի իսկական գործեր են, որոնք, որպես կանոն, չեն զիջում բնագրին, երբեմն՝ նույնիսկ գերազանցում բնօրինակները:

Թարգմանությունների գրականագիտական գնահատականները թողնելով գրականագետներին՝ որպես երաժշտագետ նշեմ, որ Ա. Աղասյանի թարգմանությունները զարմանալիորեն երաժշտական են: Բերեմ ընդամենը 1 օրինակ: Հայտնի է, որ Տյուտչևի «Я встретил вас – и все былое» բանաստեղծության հիման վրա կա հանրահայտ ռուսական ռոմանս: Եվ ահա Ա. Աղասյանի թարգմանության տեքստը ներդաշնակորեն «նստում է» ռոմանսի մեղեդու վրա, և ռուսական ռոմանսը կարող է հրաշալիորեն հնչել հայերեն:

Վստահ եմ, որ Ա. Աղասյանի թարգմանությունները կարժանանան հայ ժամանակակից կոմպոզիտորների ուշադրությանը և հիմք կդառնան նոր երգերի ու ռոմանսների ստեղծման համար. ռուսական պոեզիայի այս գոհարների երաժշտական կյանքը կշարունակվի նաև «հայերեն»:

Ա. Աղասյանի թարգմանչական տաղանդն առավելագույնս բացահայտվել է արձակ բանաստեղծությունների թարգմանության ընթացքում: Ինչպես հայտնի է՝ այս ասպարեզում կիրառվող մեթոդները խիստ տարբեր են քնարերգության և արձակի գեղարվեստական թարգմանության մեթոդներից: Արձակ բանաստեղծությունը տարբերվում է քնարերգությունից ու արձակից իր արտասովոր ձևով ու ռիթմով, քանի որ իր մեջ կրում է և արձակի և չափածոյի առանձնահատկությունները: Խոսքս, մասնավորապես, վերաբերում է Մաքսիմ Գորկու «Песня о Соколе» և «Песня о Буревестнике» ստեղծագործությունների թարգմանություններին, որոնք նույնպես անգերազանցելի են իրենց ազդեցության ուժով:

Ժողովածուն, որի լույս աշխարհ գալը նշանակալի իրադարձություն է Հայաստանի գրական կյանքում, միևնույն ժամանակ արժեքավոր ներդրում է հայ թարգմանչական արվեստում և վկայությունն է այն իրողության, որ հայոց մեջ շարունակվում է կարևորվել թարգմանական արվեստը (պատահական չէ, որ մեր տոնացույցում ունենք Թարգմանչաց տոն), իսկ ռուս դասական ու ժամանակակից պոեզիան շարունակում է մնալ թարգմանչական արվեստով զբաղվող հայ գրողների, բանաստեղծների, գրականագետների, առհասարակ մտավորականների ուշադրության կենտրոնում:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ